

Բանկոմատների դրամապահոցների (կասետների) ներկման համակարգերի գնման համար կազմակերպություն ընտրելու նպատակով բաց մրցույթ

Հայաստանի բանկերի միությունը հայտարարում է մրցույթ բանկոմատների դրամապահոցների (կասետների) ներկման համակարգերի գնման վերաբերյալ՝ հավելված 1-ով նշված բանկոմատների (ըստ մոդելների) և դրամապահոցների (կասետների) քանակի համար:

Մրցութային փաթեթը անհրաժեշտ է ներկայացնել կազմված երկու մասից (ծրարից)՝ տեխնիկական և ֆինանսական (յուրաքանչյուր ծրարի վրա նշել համապատասխան փաթեթի անվանումը և նշված երկու ծրարները տեղադրել մեկ ընդհանուր ծրարի մեջ): Տեխնիկական մասում ներկայացնել տեղեկավորություն դրամապահոցներին (կասետներին) ներկայացվող նվազագույն պահանջների բավարարման վերաբերյալ և բավարարելու դեպքում նշել համապատասխան տեխնիկական պարամետրերի բնութագիրը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը, բացի ֆինանսական փաստաթղթերից: Ֆինանսական մասում նշել մատակարարվող համակարգի ընդհանուր գինը և յուրաքանչյուր բանկոմատի համար մեկ դրամապահոցի (կասետի) գինը ըստ մոդելի, ինչպես նաև ներկայացնել յուրաքանչյուր լրացուցիչ օպցիոն ծառայության կամ սարքի գինը:

Տեղեկություններ Մրցույթի անցկացման կարգի, պայմանների և ժամկետների մասին՝

I. Մրցույթի անցկացման վայրը և մրցութային հայտերի ընդունման հասցեն՝

Մրցութային առաջարկությունները կարող եք անձամբ ներկայացնել կամ փոստով ուղարկել Հայաստանի բանկերի միություն (փոստով ուղարկելու դեպքում այդ մասին տեղեկացնել՝ uba@uba.am էլեկտրոնային հասցեի միջոցով) ՀՀ, ք. Երևան, 0009, Կոբյունի 19ա, 6-րդ հարկ հասցեով:

II. Մրցութային հայտերի ընդունման ժամկետները.

Մրցութային մասնակցելու համար հայտերը և փաստաթղթերի փաթեթն ընդունվում են մինչև ս.թ. հունիսի 26-ը ժամը 17:00: Մրցութային հայտերի ծրարների բացումը տեղի կունենա հունիսի 28-ին:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի բանկերի միություն, Մրցութային կոմիտե:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0009, Կոբյունի 19ա, 6-րդ հարկ:

Կոնտակտային անձ՝

Լիլիթ Պողոսյան

Հեռ. +(37410) 52-77-31, Էլ. փոստ՝ lilit@uba.am

ՀԲՄ կայք՝ www.uba.am

III. Մրցույթի անցկացման կարգը

1. Մրցութային կարող է մասնակցել ցանկացած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը կներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Մրցութային հայտերը և անհրաժեշտ փաստաթղթերը մրցույթի մասնակիցները ներկայացնում են տպագրված ֆիրմային ձևաթղթի վրա (կանոնադրության և պետական ռեզիստրում գրանցման վկայականի պատճենները՝ “Իսկականի հետ ճիշտ է” նշումով), հաստատված մասնակից-կազմակերպությունների ղեկավարների ստորագրություններով և կնիքներով, ծրարները՝ ստանձված և մրցույթի մասնակցի կնիքով կնքված, որի վրա նշվում է մրցույթի անվանումը, ուղարկողի (Մրցույթի մասնակցի) և ստացողի (Մրցույթի կազմակերպչի) հասցեները և անբողջական անվանումները:

3. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- Փաստաթղթերի ցանկ;
- Նամակ-հայտ Մրցույթին մասնակցելու համար (գրվում է ազատ ոճով):
- Մատակարարման ժամկետները՝ 1-ին խմբաքանակը 300 բանկոմատների և 600 դրամապանոցների (կասետների) համար և մյուս խմբաքանակների մատակարարման ժամկետները:
 - Վերջնական գների (ներառյալ հարկերը և այլ ծախսերը), և մատակարարվող ծառայությունների ժամկետների վերաբերյալ առաջարկներ:
 - Տեղեկանք՝ մրցույթի մասնակցի տվյալների մասին՝ կազմակերպության անվանումը, հասցեն և մասնակցի նախընտրությամբ լրացուցիչ այլ տեղեկատվություն:
 - Կանոնադրության (անհատ ձեռնարկատերերի համար պարտադիր չէ) պատճեն (փոփոխություններով):
 - Պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն(այդ թվում գործադիր մարմնի ներդիրը);

4. Նվազագույն տեխնիկական պահանջներն են.

- Պատահար տեղի ունենալու դեպքում դրամապահոցում (կասետում) եղած թղթադրամների 100%-ի և յուրաքանչյուր թղթադրամի 20%-ի ներկման հնարավորություն:
- Համակարգը պետք է ունենա մոնիտորինգի ենթարկվելու հնարավորություն (յուրաքանչյուր պատահարի տեղի ունենալու ժամանակի, պատճառի և տեղի ֆիքսման համար նախատեսված ֆունկցիայի առկայություն):
 - Համակարգը պետք է ապահովի դրամապահոցների (կասետների) համատեղելիություն նույն մոդելի բանկոմատների հետ (դրամապահոցները չպետք է կապված լինեն միայն մեկ բանկոմատի հետ, այլ առանց կոնֆիգուրացիոն փոփոխությունների կարողանան տեղափոխվել նաև այլ բանկոմատներ):
 - Համակարգը չի կարող պաշտպանությունից հանվել բանկոմատի տարածքից դուրս՝ առանց հատուկ գործողությունների և կառավարման գործիքների կիրառման:
 - Մոդուլային պաշտպանության միջոցների տեսակների վերաբերյալ տեղեկատվություն, նվազագույնը՝ լույսի ցուցիչ, ջերմաստիճանի ցուցիչ, սեյսմիկ ցուցիչ, 3G ցուցիչ, դռան անօրինական բացման, բանկոմատների թեքման դեպքերում հատուկ սենսորների առկայություն:
 - Ներկման ակտիվացումից հետո ATM-ների դիսպենսերի աշխատանքի դադարեցման հնարավորություն:
 - Ըստ անհրաժեշտության, մոդուլային լուծումները ընդլայնելու հնարավորություն (ֆինանսական մասում յուրաքանչյուրի համար սահմանված գինը նշել):
 - Բարձր անվտանգություն ունեցող ներկանյութը պետք է սերտիֆիկացված լինի հավատարմագրված և բարձր հեղինակություն ունեցող լաբորատորիայի կողմից: Դա կերաշխավորի, որ ներկանյութը հնարավոր չի լինի հեռացնել ոչ մի մաքրող միջոցով (մաքրող միջոցներ, ջերմաստիճանի ազդեցություն, տարբեր համակցություններ և այլն):
 - Ներկանյութում պետք է բացառվի գրգռող և թունավոր նյութերի առկայությունը:
 - Առաջարկվող տեխնոլոգիան չպետք է պարունակի պայթուցիկ նյութեր:
 - Բարձր անվտանգություն ունեցող ներկանյութը պետք է համատեղելի լինի պոլիմերային, հիբրիդային թղթադրամների հետ:
 - Բարձր անվտանգություն ունեցող ներկանյութը պետք է պարունակի նաև ինֆրակարմիր մարկերներ:

- Դրամապահոցում ներկի պաշտպանության սարքը չպետք է էապես նվազեցնի թղթադրամների բեռնման կարողությունը:

- Ներկերի կյանքի տևողությունը նվազագույնը 8 տարի (ֆինանսական մասում նշել ներկերի համար սահմանված գինը):

- Մարտկոցների կյանքի տևողությունը՝ նվազագույնը 2 տարի (ֆինանսական մասում նշել պահեստային մարտկոցների համար սահմանված գինը):

- Բանկոմատի գլխավոր կառավարման համակարգը պետք է ունենա ավտոնոմ մարտկոց նվազագույնը 4 տարի կյանքի տևողությամբ (ֆինանսական մասում նշել մարտկոցի համար սահմանված գինը):

- Էներգետիկ բնութագրերը պետք է համապատասխանեն միջազգային ստանդարտներին (CE, UL և այլն):

- Լուծումների տրամադրում ոչ միայն բանկոմատների այլ նաև Cash In-ների համար:

- Թրեյնինգների տրամադրում:

- Սպասարկման, համակարգի մասերի մատակարարման, շուրջօրյա խորհրդատվական ծառայության հասանելիության ապահովում:

5. Օպցիոնալ հնարավորություններ.

- Պատահարը տեղի ունենալու դեպքում, դրամապահոցում (կասետում) եղած յուրաքանչյուր թղթադրամի ներկման 20%-ի փոփոխման հնարավորություն:

- Վերը նշված բանկոմատներից բացի այլ տեսակի բանկոմատների համատեղելիության և ֆինանսական մասում դրանցից յուրաքանչյուրի արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում (NCR, Wincor, Diebold և այլն):

- Վերը նշված ցուցիչներից բացի տրամադրել նաև լրացուցիչ ցուցիչների ցանկ՝ ֆինանսական մասում նշելով յուրաքանչյուրի գինը:

- Տեսողական և ակուստիկ տագնապային ազդանշանային համակարգի առկայություն:

- Լրացուցիչ մոդուլային լուծումների ցանկի տրամադրում՝ ֆինանսական մասում նշելով յուրաքանչյուրի գինը:

6. Մրցութային կոմիտեի աշխատանքի և մրցույթի հաղթողին որոշելու կարգը.

- Մրցութային կոմիտեն կձևավորվի բոլոր մասնակից բանկերի մեկական ներկայացուցիչներից:

- Ծրարների բացման Մրցութային կոմիտեի նիստը նշանակվում է հունիսի 28-ին՝ մրցույթի կազմակերպչի հասցեում:

- Մրցութային կոմիտեի հաջորդ նիստին իրականացվում են մրցույթին մասնակցող հայտերի համադրումն ու գնահատումը, Մրցութային կոմիտեի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ որոշվում է մրցույթի հաղթողը և կազմվում է համապատասխան արձանագրություն:

- Կոմիտեի նիստից հետո՝ երեք բանկային օրվա ընթացքում Մրցույթի կազմակերպիչը Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում կնքել պայմանագիր և ներկայացնում է դրա պայմանները:

- Մրցութային կոմիտեի նիստից և Մրցույթի հաղթողին որոշելուց հետո՝ երեք բանկային օրվա ընթացքում, Մրցույթի կազմակերպիչը գրավոր, առանց հիմնավորման, ծանուցում է մնացած մասնակիցներին Մրցույթում հաղթող չճանաչվելու մասին:

- Կողմերի միջև բոլոր պայմանները համաձայնեցնելուց հետո տասը բանկային օրվա ընթացքում Մրցույթի կազմակերպչի և Մրցույթի հաղթողի միջև կնքվում է Պայմանագիր:

IV. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ մեկնարկային պայմաններ.

- Բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների համար նմանատիպ աշխատանքների փորձի առկայություն;

- Համապատասխան շուկայում աշխատանքային փորձը՝ երեք տարուց ոչ պակաս:

- Հնարավորության դեպքում՝ այլ պատվիրատուների կարծիքներ / արձագանքներ:

Բանկոմատների մոդելներ

NCR		Diebold		Wincor		SIGMA		Nautilus	
Բանկոմատների քանակը	Ղրամապահոցների քանակը	Բանկոմատների քանակը	Ղրամապահոցների քանակը	Բանկոմատների քանակը	Ղրամապահոցների քանակը	Բանկոմատների քանակը	Ղրամապահոցների քանակը	Բանկոմատների քանակը	Ղրամապահոցների քանակը
769	3077	81	356	171	944	6	32	60	310

Ընդամենը բանկոմատներ՝ 1087

Ընդամենը ղրամապահոցներ՝ 4719